ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրում 27.07.2023թ ժամը 14^{30}-ին կայացած հանրային լսումների

27.07.2023թ գ. Ջուջևան

Հանրային լսումներին մասնակցում էին «ՈՍԿԵԲԵՐ ԳԵՏ»ՍՊԸ-ի տնօրեն Լավրենտ Պապյան, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արարատ Գաբրիելյանը, Ջուջևան բնակավայրի վարչական ղեկավար Համբարձում Պետրոսյանը, համայնքի և ազդակիր համայնքի բնակիչներ՝ Կառլեն Հովհաննիսյանը, Հովսեփ Չիլինգարյանը, Հայկ Անանյանը և այլն:

Ջուջևան բնակավայրի վարչական ղեկավար Համբարձում Պետրոսյանը մասնակիցներին ներկայացրեց հանրային քննարկման նպատակի մասին: «ՈՍԿԵԲԵՐ ԳԵՏ» ՍՊԸ-ի տնօրեն Լավրենտ Պապյանը մասնակիցներին ներկայացրեց ընկերության կողմից ներկայացվող ծրագրերի մասին և հավաստիացրեց, որ ընկերության ֆինանսական ներդրումների շնորհիվ կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչպես նաև ընկերությունը կունենա իր ակտիվ մասնակցությունը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման աշխատանքներին: .Նախագծի հեղինակ ինժեներ-երկրաբան Մ.Հարությունյանը ներկայացրեց ընկերության կողմից նախատեսվող աշխատանքների ծրագիրը և նպատակը, որ համայնքի վարչական սահմաններում ընկերությունը իր ֆինանսական միջոցներով ցանկանում է կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ Ջուջևանի գրանիտների երևակման սահմաններում, դրական արդյունքների դեպքում հետագայում սահմանված կարգով շահագործման նպատակով: Ընկերությունը կապահովի բնապահպանական բոլոր նորմերի պահպանումը և բնակչության շահերը:

Ելույթ ունեցավ Նոյեմբերյան համայնքի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ա.Գաբրիելյանը, որը հավանություն տվեց ընկերության կողմից նախատեսվող

աշխատանքների իրականացմանը՝ անվերապահորեն պահպանելով շրջակա միջավայրի վրա ազդեցության բոլոր նորմերն ու միջոցառումներն ու բնակչության շահերը:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ Կառլեն Հովհաննիսյանը, Հայկ Անանյանը և այլն, որոնք հավանություն տվեցին ներկայացվող աշատանքների ծրագրին և փաստեցին, որ այն կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը և աշխատանքի մեջ կնդգրկվեն հիմնականում համայնքի բնակիչները:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները համայնքի վարչական ղեկավար Համբարձում Պետրոսյանը նշեց նախատեսվող աշխատանքների կարևորությունը համայնքի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման համար: Փաստվեց նաև, որ աշխատանքների ընթացքում պետք է պահպանվեն համայնքի բնակիչների շահերը և համայնքը տալիս է իր նախնական համաձայնությունը ընկերությանը սահմանված կարգով իրականացնելու գրանիտների երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները:

Ջուջևան բնակավայրի վարչական ղեկավար

Հ. Պետրոսյան

«ՈՍԿԵԲԵՐ ԳԵՏ» ՍՊԸ-ի տնօրեն _____ Լ. Պապյան

Արձանագրող _____ Կ. Իսրայելյան